Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 20-06-2022 թ. որոշմամբ
«ՍԱՄՈՒԷԼ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՍԱՄՈՒԷԼ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Ամիրյան 28 7
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00870
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2007-11-13
1.5 ՀՎՀՀ-ն		02587655
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91210385
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		n.melkomian@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Նորայր Մելքում Մելքումյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	կանոնադրական նպատակների իրականացման համար	361,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

Digitally signed by
MELKOM
MELKOMIAN
NORAIR
1403510121
Date: 2022.06.21

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	879,000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	0	

Նշումներ՝

Հիմնադիրներից և հոգաբարձուների խորհրդի անդամներից ոչ մեկը չի օգտվել հիմնադրամի միջոցներից և ծառայություններից, իսկ կառավարիչը միայն ստացել է օրենքով պարտադիր աշխատավարձ:

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___11___ թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Սամուէլ Սարուխանեան» Հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

2021թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 1

Հոգաբարձուների խորհրդի կազմը 3

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 4

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ... 5

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 6

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 7

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սամուէլ Սարուխանեան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սամուէլ Սարուխանեան» Հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելուհամար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

20 հունիսի 2022թ.

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր /Աուդիտի ղեկավար

Հոգաբարձուների խորհրդի կազմը

Ալբերտ Աջեմյան
Հոգաբարձուների խորհրդի նախագահ

Վարուժան Առաքելյան-Սալմասի
Խորհրդի անդամ

Վաքրիկ Մանուկյան-Սալմասի
Խորհրդի անդամ

Հանրի Քոչարյան
Խորհրդի անդամ

Վահե Իսախանյան
Խորհրդի անդամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ավանդի ներդրում	4	20,990	3,747
		20,990	3,747
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր	5	3,345	1,854
Ավանդի ներդրում	4	300	17,243
Դրամական միջոցներ և համարժեքներ		19	140
		3,664	19,237
Ընդամենը ակտիվներ		24,654	22,984
Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվներ			
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Շահութահարկի գծով պարտավորություն		400	404
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին		-	-
Եկամուտներին վերաբերող շնորհներ	6	24,254	22,580
		24,654	22,984
Ընդամենը պարտավորություններ		24,654	22,984

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 20-ին:

Նորայր Մելքում Մելքումյան
Տնօրեն

Ֆինանսական վիճակի մասինհաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 9-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհից եկամուտ		-	-
Ֆինանսական եկամուտ		2,223	2,247
		2,223	2,247
Վարչական և այլ ծախսեր		(510)	(526)
Ծրագրի իրականացում		-	-
Փոխանցում շնորհին	6	(1,313)	(1,317)
Շահութահարկի գծով ծախս		(400)	(404)
Տարվա արդյունք		-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 9-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	-	-
Ճշգրտումներ '		
Շահութահարկի գծով ծախս	400	404
ֆինանսական եկամուտ	(2,223)	(2,247)
Շնորհից եկամուտ	1,313	1,317
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(510)	(526)
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(1,491)	770
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	-	-
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(2,001)	244
Վճարված շահութահարկ	(404)	(123)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(2,405)	121
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցներիհոսքեր		
Տոկոսի ստացում	2223	2,247
Ավանդի մարում	-	-
Ավանդի ներդրում	(300)	(2,700)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	1,923	(453)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհի ստացում	361	360
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	361	360
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(121)	28
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	140	112
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	19	140

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 9-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Սամուէլ Սարուխանեան» Հիմնադրամը ստեղծվել է 2007թ. նոյեմբերի 13-ին: Հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի հիմնական նպատակներն են օժանդակել հայ ժողովրդի, մասնավորապես իրանահայ համայնքի գոյատևման, հայապահպանման և Հայ Դատի արծարծման ու լուծման համար տարվող աշխատանքներին: Ֆինանսական միջոցները գոյանում են ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ եկամուտներից:

2021թ. Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 1 մարդ (2020թ.՝ 1 մարդ):

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան քաղաք, Ամիրյան փողոց, շենք 28, բնակարան 7:

2. Պատրաստման հիմքերը

2.1. Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2.2. Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է («դրամ»), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Շնորհներ

Հիմնադրամի միջոցները հիմնականում ձևավորվում են նվիրատվություններից: Ստացված նվիրատվությունները ձևակերպվում են որպես «Եկամուտներին վերաբերող շնորհներ»: Նվիրատվությունները ներկայացվում են ստացման արժեքով: Համապատասխան եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այն նվիրատվությունները, որոնց արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել, հաշվառվում են իրենց շուկայական արժեքով:

3.2. Փոխհատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.3. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխություններըվերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

i) Դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը:

ii) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը:

i) Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում՝ ամորտիզացված արժեքով:

3.4. Շահութահարկ

Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է: Հիմնադրամի անհատույց ստացված ակտիվները և դրանց հաշվին կատարված ծախսերը շահութահարկի առումով հարկվող տարրեր չեն:

4. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ	-	-
Դեբիտորական պարտքեր ավանդի տոկոսի գծով	3,171	1,644
Միասնական հաշիվ	174	210
	3,345	1,854

5Ավանդի ներդրում

	պայմանագրի համարը/հաշվեհամար	Պայմանագրի կնքման ժ./համաձայնագրեր	Գումարը	տոկոսադրույքը
	008006/163005015835	11.06.2014/01.01.2021	2,747	9.25%
	26698/163003043151	20.03.2018/01.01.2021	14,543	9.50%
	26699/163003043177	20.03.2018/01.01.2021	1,000	9.50%
	41638/163003320989	17.03.2020/01.01.2021	2,700	9.00%
	46423/163007054832	29.03.2021/26.09.2022	300	9.50%
	ԸՆԴԱՄԵՆԸ		21,290	

Հիմնադրամը 2021թ. 300 հազար դրամ ավանդ է դրել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում:

2021թ. ստացված եկամուտը կազմել է 2,223 հազար դրամ:

2022թ. ավանդային պայմանագրերը վերակնքվել են և երկարաձգվել 2023-24թթ..:

6. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	22,580	20,903
Ավելացում	361	360
Այլ ավելացում	1,313	1,317
Փոխանցվել է ծախսերի հաշվին	-	-
Տարեվերջի մնացորդ	24,254	22,580

7. Գործարքներ կապակցված կողմերի միջև

7.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

7.2 Գործարքներ

Տնօրենը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	361	360

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 21.06.2022 14:43